https://doi.org/10.46991/hc.2023.20.2.159

The activities and the transformation process of the Parliament of Armenia in the first years of Independence

Lilit Zakaryan
https://orcid.org/0009-0005-4497-5410
PhD in Historical Sciences, Associate Professor
Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia
lilit_zakaryan@mail.ru

Keywords: ASSR, Republic of Armenia, Supreme Council, agenda of independence, president, prime minister, bill, law, party, parliamentary group, faction.

The Parliament of Armenia began its activity as the Supreme Council of the twelfth convocation of the Armenian Soviet Socialist Republic, then became the Supreme Council of the first convocation of the Republic of Armenia, and in 1995 After the adoption of the Constitution, it turned into the National Assembly of the Republic of Armenia. During the first two years of its activity, the parliament experienced three important stages. In the first stage, the Supreme Council acted as the highest legislative body of the government. The Artsakh movement woke up the Soviet-Armenian society from its long slumber and the parliament-voter feedback was quite strong, that is, the parliament was fulfilling its mission as a representative body. The agenda of independence was formed in the Supreme Council, it became a platform for the establishment of new political forces, the separation of ideologies of political parties, and the formation of a democratic culture. The new forces that entered the Supreme Council did not trust the previous authorities, their officials both in the central government bodies and in the local government bodies, and tried to take the solution of all issues on themselves. As a result, law-making activity suffered. In that period, the structure of the Supreme Council and the procedure of work organization were also changed. An acute conflict arose between the legislative and executive branches of government. The appointment of activists of the Artsakh movement to the post of Prime Minister and Council of Ministers temporarily regulated the relationship between the legislative and executive powers, but in the absence of a Constitution and a clear separation of the functions of the branches of government, this contradiction intensified from time to time. In the third stage of the transformation, the Supreme Council had to cede part of the powers of the legislative body to the President of the Republic of Armenia.

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 159-179.
Received: 15.10.2023
Revised: 04.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

ՀՀ խորհրդարանի գործունեությունը և փոխակերպման գործընթացը անկախության առաջին տարիներին

Լիլիթ Զաքարյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հիմնաբառեր՝ ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետություն, Գերագույն խորհուրդ, անկախության օրակարգ, նախագահ, վարչապետ, օրինագիծ, օրենք, կուսակցություն, պատգամավորական խումբ, խմբակցություն։

Հայաստանի խորհրդարանը սկսեց իր գործունեությունը որպես ՀԽՍՀ տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդ, **այնուհետև դարձավ** ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդ, իսկ 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո, վերածվեց Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի։ Իր գործունեության առաջին երկու տարիների ընթացքում խորհրդարանը կարևոր երեք փուլ ապրեց։ Առաջին փուլում Գերագույն խորհուրդը հանդես էր գալիս որպես իշխանության օրենսդրական բարձրագույն մարմին։ Արցախյան շարժումն երկարատև նիրհից արթնացրեց խորհրդահայ հասարակությանը և խորհրդարան-ընտրող հետադարձ կապը բավական ուժեղ էր, այսինքն խորհրդարանը կատարում էր ներկայացուցչական մարմնի իր առաքելությունը։ Գերագույն խորհրդում ձևավորվեց անկախության օրակարգը, այն հարթակ դարձավ նոր քաղաքական ուժերի կայացման, քաղաքական կուսակցությունների գաղափարախոսությունների տարանջատման, ժողովրդավարական մշակույթի ձևավորման համար։ Գերագույն խորհուրդ մտած նոր ուժերը չէին վստահում նախկին իշխանություններին, նրանց պաշտոնյաներին թե՛ իշխանության կենտրոնական մարմիններում, թե՛ տեղական իշխանության մարմիններում և փորձում էին բոլոր հարցերի լուծումը վերցնել իրենց վրա։ Դրա հետևանքով տուժում էր օրինաստեղծ գործունեությունը։ Այդ շրջանում փոփոխվեց նաև Գերագույն խորհրդի կառուցվածքը և աշխատանքի կազմակերպման ընթացակարգը։ Երկրորդ փուլում, երբ վարչապետի պաշտոնում և Մինիստրների խորհրդում նշանակվեցին Արցախյան շարժման ակտիվիստները ժամանակավորապես իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների հարաբերությունները կարգավորեցին, սակայն Սահմանադրության բացակայության և իշխանության թևերի գործառույթների հստակ բաժանման բացակայության պայմաններում այդ հակասությունը ժամանակ առ ժամանակ սրվում էր։ Փոխակերպման երրորդ փուլում Գերագույն խորհուրդը ստիպված եղավ օրենսդիր մարմնի լիազորությունների մի մասը զիջել ՀՀ նախագահին։

Деятельность и процесс трансформации Парламента РА в первые годы независимости

Лилит Закарян
кандидат исторических наук, доцент
Институт истории Национальной академии наук Республики Армения

Ключевые слова: Армянская ССР, Республика Армения, Верховный Совет, повестка независимости, президент, премьер-министр, законопроект, закон, партия, парламентская группа, фракция.

Парламент Армении начал свою деятельность как Верховный Совет Армянской ССР двенадцатого созыва, затем стал Верховным Советом РА первого созыва, а в 1995 г., после принятия Конституции, стал Национальным Собранием Республики Армения. За первые два года своей деятельности парламент пережил три важных этапа. На первом этапе Верховный Совет выступал в качестве высшего законодательного органа правительства. Арцахское движение пробудило советско-армянское общество от долгого сна, и обратная связь между парламентом и избирателями была достаточно сильной, то есть парламент выполнял свою миссию представительного органа власти. В Верховном Совете была сформирована повестка независимости, он стал платформой для становления новых политических сил, разделения идеологий политических партий, формирования демократической культуры. На первом этапе новые политические акторы, вошедшие в Верховный Совет, не доверяли предыдущей власти, его чиновникам- как в центральных органах власти, так и в органах местной власти, и пытались взять решение всех вопросов на себя. В результате страдала законотворческая деятельность Верховного Совета. В этот период были изменены структура Верховного Совета и порядок организации работы. Возник острый конфликт между законодательной и исполнительной ветвями власти. Назначение активистов Арцахского движения на пост премьер-министра и Совета министров временно регулировало отношения между законодательной и исполнительной властью, но в условиях отсутствия Конституции и четкого разделения функций ветвей власти, это противоречие время от времени обострялось. На третьем этапе трансформации Верховному Совету пришлось передать часть полномочий законодательного органа Президенту Республики Армения.

* * *

Ներածություն: Անկախության հռչակումից հետո Հայաստանի քաղաքական համակարգը լուրջ փոխակերպումների ենթարկվեց. ձևավորվեցին անկախ պետության քաղաքական ինստիտուտները, ստեղծվեցին և ներդրվեցին քաղաքական նոր տեխնոլոգիաներ, փոփոխություններ եղան հասարակական գիտակցության մեջ: Փոխակերպում ապրեց նաև քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ հանրապետության խորհրդարանը՝ բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմինը: Արխիվային նյութի ուսումնասիրության հիման վրա հոդվածում վերլուծված են Հայաստանի խորհրդարանի

անկախացման շրջանի փոխակերպումները: Առաջին անգամ առանձին ուսումնասիրության նյութ է դարձել Գերագույն խորհրդի գործունեությունը, վերլուծվել է կազմը, ԳԽ-ընտրողներ հետադարձ կապի ձևավորումը, արտաքին և ներքին պայմանների ազդեցությամբ օրակարգի ձևափոխումը:

Անկախացման շրջանում Գերագույն խորհուրդը քաղաքական նոր զարգացումների հիմնական առաջնորդողն էր, քանի որ պատգամավորների մեծ մասը հայտնվեց խորհրդարանում Ղարաբաղյան շարժման շնորհիվ: Խորհրդային իշխանության պայմաններում խորհրդարան մտան փոփոխությունների հիմնական 2 պատվիրատուները՝ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության հետևորդները և լիբերալ բարեփոխումների կողմնակիցները: Երկուսն էլ սկզբնական շրջանում հանդես էին գալիս ժողովրդավարության հարացույցի ներքո:

Խորհրդարանը դարձավ կարևոր հարթակ ոչ միայն հանրապետության անկախացման համար պայքարում, այլև նոր քաղաքական ուժերի կայացման, ազգային և պետական գաղափարախոսությունների զարգացման, քաղաքական կուսակցությունների սաղմնավորման, ժողովրդավարության մշակույթի ձևավորման համար:

Խորհրդային իշխանությունները որոշակի սահմաններ էին գծել հանրապետության խորհրդարանի համար, բայց ազատության և անկախության աճող չափաբաժնով պայմանավորված Հայաստանի Գերագույն խորհուրդը աստիճանաբար անցնում էր այդ սահմանները, վերածվում հզոր, քաղաքական խաղի նոր կանոններ թելադրող ուժի, քաղաքական նոր գաղափարախոսությունների ձևավորմանը նպաստող հարթակի, ժողովրդի հետ բացեիբաց զրուցող, կիսվող ներկայացուցչական իշխանության մարմնի:

Խորհրդարանը խտացված ներկայացնում էր հայաստանյան և արցախյան հասարակությունը, իր տարբեր սոցիալական խմբերով և խավերով, քաղաքական հայացքներով, թաքնված և բացահայտ շահերով, արժեքներով, որոնք հնթացս զարգանում կամ դեֆորմացվում էին:

1990-1992թթ. ընթացքում խորհրդարանը փոխակերպման 3 փուլ ապրեց.

Օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից անկախացման գործընթացի ազդարարման փուլ: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդից վերածվեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի: Այս փուլում Գերագույն խորհուրդը Հայաստանում իշխանության գերագույն մարմինն էր: Գերագույն խորհուրդ էին մտել հասարակության նոր ուժեր, իսկ կառավարությունը կոմունիստական էլիտայի ձեռքում էր: Այդ պատճառով, իշխանության եկած նոր ուժերը անվստահություն ունեին կառավարության նկատմամբ և փորձում էին ամենինչ որոշել խորհրդարանում:

Օրենսդիր և գործադիր գործառույթների տարանջատման փուլ, երբ ձևավորվեց նոր կառավարություն, որի ղեկավարումն ու կազմի ձևավորումն իրականացրեցին Արցախյան շարժման ղեկավարներն ու ակտիվ մասնակիցները: Անվստահության առիթ կարծես թե չկար, ԳԽ-ն ստիպված եղավ ճանաչել իշխանության մյուս թևի ինքնուրույն գործելու իրավունքը, սակայն շուտով՝ օրենսդրորեն իրավասությունների ամրագրված չլինելու պայմաններում, հակասությունները իշխանության 2 թևերի միջև դարձյալ սրվեցին:

Գերագույն խորհուրդի լիազորությունների, որպես օրենսդիր իշխանության միակ բարձրագույն մարմնի, սահմանափակման փուլ: ՀՀ նախագահի ինստիտուտի հիմնումից հետո Գերագույն խորհուրդը Նախագահին զիջեց իր լիազորությունների մի մասը:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները և գործունեության սկիզբը: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընտրվեց մեծամասնական ընտրական համակարգով, 2 փուլով՝ 1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին: Մայիսի 20-ի ընտրություններին 259 ընտրական օկրուգներում քվեարկությանը մասնակցեցին 1390 պատգամավորության թեկնածուներ: Մեկ տեղի համար միջին հաշվով պայքարեց 5 թեկնածու[1]: Ընտրություններին մասնակցեց ընտրողների 60,4%-ը: 77 օկրուգում ընտրություններ չկայացան՝ ընտրողների ցածր ներկայացվածության պատճառով: Հունիսի 3-ին անցկացվեց կրկնական քվեարկություն, իսկ հուլիսի 15-ին՝ ընտրություններ: Առաջին նիստին հաստատվեց 195 պատգամավորների ընտրությունը, ազատ էր մնացել 65 մանդատ: Առաջին նիստի բացմանը ներկա էր 175 պատգամավոր: Հետագա ընտրությունների արդյունքում պատգամավորների թվաքանակը դարձավ 260:

Նախընտրական փուլում, չձևավորված ժողովրդավարական մշակույթի պայմաններում, իշխանության համար պայքարում երկու կողմից էլ՝ և՛ իշխանության, և՛ ընդդիմության, կիրառվեցին նաև պայքարի ոչ լեգիտիմ մեթոդներ, ընթացակարգեր և պրակտիկաներ: Ընդդիմության թողտվությամբ բռնություն կիրառվեց հանրապետության խորհրդային իշխանության ղեկավար կազմի որոշ ներկայացուցիչների նկատմամբ (ծեծի ենթարկվեց ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագան Հ.Ոսկանյանը), հարձակումներ եղան կառավարական շենքերի վրա, վիրավորական արտահայտություններ էին հնչում Ամենայն հայոց կաթողիկոսի և այն մտավորականների հասցեին, ովքեր, վախենալով հանրապետության ճակատագրի համար, գտնում էին, որ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի պայմաններում ԽՍՀՄ-ի կազմում մնալը այլընտրանք չունի: Սակայն, քանի որ հասարակական կարծիքը ՀՀՇ-ի կողմն էր, ընտրությունները ընկալվեցին որպես ժողովրդավարական, բացի այդ խորհրդային ընտրությունների համեմատությամբ դրանք առաջընթաց էին:

Հայաստանի խորհրդարանը[2] սկսեց իր գործունեությունը որպես ՀԽՍՀ տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդ, **այնուհետև դարձավ** ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդ (1990 թ. օգոստոսի 23-ին՝ Անկախության հռչակագրի ընդունումից հետո) և վերջապես՝ 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո, վերածվեց Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի:

Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքում Հայաստանի Կոմունիստական կուսակցությանը (ՀԿԿ) ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) ստացավ քվեների 45%, 1 հոգի ԱԻՄ-ից էր[3] (հեռակա կարգով պատգամավոր էր ընտրվել անկախության գաղափարի ջատագով, խորհրդահայ շրջանի հայտնի այլախոհ Պարույր Հայրիկյանը): Պատգամավորների թվում կային մտավորականներ, կոմունիստական քաղաքական ռեժիմի այլախոհներ, Կոմունիստական կուսակցական էլիտայի ներսում ձևավորված ընդդիմադիրներ, նոր ձևավորվող կուսակցությունների գաղափարախոսությունների կրողներ,

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.207, ց.62, գ.43, էջ 6:
[2] ՀՀ ԳԽ աշխատեց **1990** թ. հուլիսի 20-ից մինչև 1995թ. մայիսի 15-ը:
[3] ՀԱԱ, Ֆ.207, Ց.62, Գ.43, էջ 6:

տնտեսական էլիտայի շուկայամետ ներկայացուցիչներ (ովքեր հիմնականում խորհրդային «ցեխավիկային մշակույթի» և կոոպերատիվ շարժման արդյունք էին), իշխանական և կառավարական ամենատարբեր մարմինների ներկայացուցիչներ, պատգամավորներ Արցախից: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը միջին տարիքի էր՝ 36-55 տարեկանները 72%-էին կազմում, 55-ից բարձր՝ 9%-ը, մինչև 35 տարեկանները՝ 19%: Պատգամավորների 95%-ը ուներ բարձրագույն կրթություն, մնացածը՝ թերի բարձրագույն, միջին մասնագիտական, միջնակարգ: Պատգամավորների 26%-ը գիտությունների թեկնածուներ և դոկտորներ էին: Ստացած կրթությամբ 28% ուներ ինժեների որակավորում, 15%-ը՝ ֆիզիկոսի, մաթեմատիկոսի, քիմիկոսի, 15%-ը՝ ագրոնոմիական (ագրոնոմ, գյուղատնտես, անասնաբույժ, անասնաբույծ), 12%-ը՝ տնտեսագետի, 7%-ը՝ պատմաբանի, 7%՝ իրավաբանի որակավորում[1]: Պատգամավորների 11%-ը գիտական հիմնարկների գիտաշխատողներ էին, 10%-ը մեծ և փոքր ձեռնարկությունների, հիմնարկների տնօրեններ, 10%-ը տեղական խորհուրդների նախագահներ, 7%-ը շրջկոմների, քաղկոմների քարտուղարներ: Սոցիալական կազմի առումով՝ հանրապետության աշխատավորության մեջ ամենամեծ տոկոսը կազմող բանվորությունը ԳԽ-ում ուներ ընդամենը մեկ ներկայացուցիչ: Կանանց ներկայացվածությունը, խորհրդային տարիների գրեթե հավասար ներկայացվածությունից հետո կտրուկ իջել էր՝ ընտրվել էր ընդամենը 5 կին:

Աշխատանքի ընթացքում խորհրդարանում սկսեցին ձևավորվել խորհրդարանական խմբակցություններ և պատգամավորական խմբեր: Դրանք անջատվում էին և՛ ՀԿԿ-ից, և՛ ՀՀՇ-ից: Առաջին երկու տարիների ընթացքում ՀՀՇ-ի նկատմամբ նոր ընդդիմություն ձևավորվեց:

Խորհրդարանի աշխատանքի վրա մեծապես ազդում էր հանրապետության արտաքին դրությունը և աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում պայքարի տարբեր ուղիների նախընտրումը: 1988 թ. արտաքուստ երևացող միաբանությունը խախտվում էր նաև նորընտիր իշխանությունների հետ սեփականաշնորհման, ապապետականացման, բանակաշինության հետ կապված տարաձայնությունների հետևանքով: Այդ տարիներին սկիզբ առավ խորհրդային վերջին տասնամյակներին ձևավորված երկրի արդյունաբերական ներուժի փլուզումը: Իհարկե դրա պատճառը նաև ԽՍՀՄ քայքայման սկսված գործընթացն էր, սակայն կային նաև սուբյեկտիվ գործոններ, որոնք վատթարացնում էին վիճակը: Քաղաքական փոխակերպումներին զուգընթաց, այդ շրջանում ընթանում էր նաև սոցիալական կառուցվածքի ձևափոխումը:

Ինչպես և ցանկացած հաղթանակած հեղափոխական շարժումից հետո, իշխանության էին եկել կառավարման կարողություններ չունեցող մարդիկ, որոնք բազմաթիվ բացթողումներ ունեցան և սխալներ թույլ տվեցին: Այդ շրջանում վերլուծություններ անելու, գնահատականներ տալու ժամանակ չկար, անհրաժեշտ էր գործել, և ամեն մի քաղաքական ուժ ձևավորվում էր այն տեսլականի շուրջ, որն իր տեսակետից Հայաստանի համար միակ ճիշտն էր:

Որևէ կուսակցություն կամ խումբ բացարձակ մեծամասնություն չէր կազմում, կար կարծիքների բազմազանություն, ինչի հետևանքով յուրաքանչյուր օրինագծի ընդունման շուրջ սուր պայքար էր ծավալվում: Գերագույն խորհուրդը դառնում էր բաց հարթակ նոր գաղափարների առաջացման, սկզբունքային և ոչ սկզբունքային հարցերի շուրջ բանավեճի, պետական

[1] Հաշվարկներն արվել են ԳԽ պատգամավորական կազմի վերլուծության արդյունքում:

մտածողության ձևավորման, ազգային և նույնիսկ ապազգային գաղափարախոսության լրամշակման համար։

Անկախության օրակարգի հաստատումը Գերագույն խորհրդում։ Խորհրդային երկրում ճգնաժամային երևույթներն ի հայտ եկան դեռ 1970-ականների վերջում։ Հայաստանում նույնպես կային շատ խնդիրներ՝ էկոլոգիական, տնտեսական, սոցիալական, քաղաքական։ Դրանք քննարկվում էին Կոմունիստական կուսակցության պլենումներում և համագումարներում, խորհրդային իշխանական մարմինների տարբեր հարթակներում, բայց հասարակության մեծ մասին հասանելի դարձան «Վերակառուցման» քաղաքականության շնորհիվ։ Այդ ժամանակ սկսեցին բարձրաձայնվել նաև խորհրդային երկրում տասնամյակներով արգելված թեմաներ։ Դրանցից էր ազգային հարցը։ Ղարաբաղյան շարժումը ծնվեց էկոլոգիական խնդիրների քողի տակ, այնուհետև վերածվեց ԼՂԻՄ հայ բնակչության իրավունքների համար ազգային-ազատագրական պայքարի։ Շուտով շարժման հարթակները դարձան հայ հասարակության բոլոր հիմնահարցերի քննարկման հավաքատեղի և առաջին անգամ ցույցերի ընթացքում ներկայացվեց նաև Հայաստանի անկախացման հայտը։ 1990 թ. մոտ ապագայում դա դեռևս հնարավոր չէր համարվում։ Մարդիկ ավելի շատ մտածում էին, որ ԽՍՀՄ ժողովրդավարացման արդյունքում հնարավոր է Ղարաբաղի հարցի լուծումը և պատգամավորների մեծ մասը ընտրվել էին հենց այդ նպատակով։ ՀՀ Գերագույն խորհուրդն ընտրություններից հետո հաստատեց առաջիկա ամիսների իր աշխատանքի օրակարգը, որն ըստ էության անկախացման օրակարգ էր։ Նախատեսվում էր քննարկել և ընդունել հետևյալ օրենքները՝

Հայաստանի Հանրապետության կառավարության մասին,

Զինապարտության և զինվորական ծառայության մասին,

Հայաստանի Հանրապետության պատգամավորի հետկանչման կարգի մասին,

Սահմանադրական հանձնաժողով կազմելու մասին,

Իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացման մասին,

Գերագույն խորհրդի ապարատի մասին,

Ռեպրեսիաների ենթարկվածների իրավունքների վերականգնման մասին,

Սեփականության մասին,

Տեղական խորհուրդների մասին,

Լեզվի մասին,

Քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և միավորումների մասին,

ՀՀ վարչատարածքային ռեֆորմի մասին,

Խղճի ազատության մասին,

Ազգային փոքրամասնությունների մասին,

Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների մասին,

Մայրության և մանկության պաշտպանության և բազմազավակության խրախուսման մասին,

Հանրաքվեի մասին,

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման մասին[1]։

[1] ՀԱԱ , ֆ.207, ց.62, գ.1, էջ 58-62։

Գերագույն խորհրդի ներկայացված օրակարգում ներառված էին հայ հասարակությանը հուզող շատ հարցեր: Օրենսդրական փաթեթը նախատեսում էր օրենսդիր, գործադիր իշխանության և իրավական համակարգի փոփոխում, խոսքի և խղճի ազատություն, տնտեսական համակարգի վերափոխում, վարչատարածքային կառուցվածքի և տեղական իշխանությունների վերակառուցում: Ժողովրդավարական բարեփոխումներ էին նախատեսվում հասարակական-քաղաքական համակարգում: Ուսումնասիրվող շրջանում օրակարգը անընդհատ համալրվում էր նոր օրինագծերով, որոշումներով: Օրակարգի շատ հարցեր առաջադրվել էին Անկախության հրապարակում: Սակայն օրակարգը հեռացել էր նույն Ազատության հրապարակում ծնված խնդրից, Հայաստանի և Արցախի վերամիավարման մասին ՀԽՍՀ ԳԽ 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումից: Դրա փոխարեն նախատեսվում էր հատուկ փաթեթի ընդունում Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ստեղծվել էր պարադոքսալ իրավիճակ՝ Արցախյան շարժումը առաջացրել էր անկախության հարցը, բայց անկախության հասնելու համար, ըստ քաղաքական նորաթուխ էլիտայի, անհրաժեշտ էր հրաժարվել «Միացումից»:

ՀՀՇ գաղափարախոսներից մեկը, Վ.Մանուկյանը, այսպես էր նկարագրում իրավիճակը՝ «Խորհրդային Միությունը, գտնվելով տնտեսական և քաղաքական խորը ճգնաժամի մեջ, ստիպված դիմեց վերափոխումների՝ փորձելով ստեղծել դեմոկրատական հասարակություն, ազատ տնտեսություն: Օգտվելով այդ հանգամանքից, մենք պետք է ձգտենք տնտեսական անկախության, ինքնիշխանության և հարմար պահին պատրաստ լինենք հռչակելու անկախություն»[1]: Այսինքն, դրված էր 3 խնդիր. աստիճանաբար տնտեսական անկախության ձեռբերում, քաղաքական ինքնիշխանություն և, եթե հարմար պահ ստեղծվեր՝ անկախության հռչակում: Շարժման գաղափարախոսները գտնում էին, որ միայն անկախ և ուժեղ պետությունը կարող է լուծել իր բռնազավթված հողերի վերադարձի հարցերը, այդ պատճառով իշխանության գալուց հետո, մինչև պատերազմական գործողությունների նախաձեռնումը Ադրբեջանի կողմից, խուսափում էին Արցախի ազատագրման ուղղությամբ կոնկրետ քայլերից:

Այդ մասին ՀՀՇ ղեկավարները, որոնց մեծ մասը «Ղարաբաղ» կոմիտեից էին, բազմիցս հնչեցրել էին համաժողովրդական ցույցերի ընթացքում, բայց հնչեցրել էին կարծես տողատակերում, այդ պատճառով ոչ միայն ընտրողների մեծ մասի, այլև ընտրված պատգամավորների որոշ մասի համար անակնկալ էր Արցախի Հայաստանի հետ վերամիավորման հարցն երկրորդական պլան մղելը: Օրակարգի հաստատման ժամանակ միացման հարցը լրջորեն չքննարկվեց, հարցադրումները ավելի ուշ առաջացան և աստիճանաբար ավելի սուր բնույթ կրեցին:

ՀԽՍՀ ԳԽ հաստատված օրակարգը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի մասերի.

Քաղաքական համակարգի փոփոխումը նախատեսող օրինագծեր,

Տնտեսական համակարգի ձևափոխմանն ուղղված օրինագծեր,

Սոցիալ-մշակութային կյանքին վերաբերվող օրինագծեր,

Մարդու իրավունքներին վերաբերվող օրինագծեր:

[1] Վ.Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում //«Վ.Ի.Վ. ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ», Երևան, 2002թ., էջ 37: https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf

Սոցիալ-մշակութային և մարդու իրավունքներին վերաբերող հարցերի շուրջ Գերագույն խորհրդում ընդհանուր առմամբ կար կոնսենսուս։ Տնտեսական համակարգը բազմակացութաձև դարձնելու պահանջը արդեն ձևավորվել էր համաժողովրդական ցույցերի ընթացքում։ Ընդհանրական պատկերացումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ պետական սեփականության կողքին պետք է ստեղծվեր նաև մասնավոր սեփականություն, կոոպերատիվ և այլն։ Սակայն լուրջ տարաձայնություններ առաջացան սեփականաշնորհման տեմպերի և իրականացման մեթոդների շուրջ։ Ինչ վերաբերվում է քաղաքական համակարգին, ապա այստեղ միակ համաձայնությունը բազմակուսակցականության շուրջ էր ձևավորվել, մյուս բոլոր հարցերում կարծիքները տրամագծորեն տարբեվում էին՝ սկսած անկախության և անկախացման ուղիների վերաբերյալ պատկերացումներից, վերջացած պետական համակարգի ձևից և Արցախի հարցից։

Հայաստանի ապագայի տեսլականը և ուղու «քարտեզագրումը» ԳԽ նախագահի թեկնածուների ծրագրերում։ 1990 թ.*օգոստոսի 4-ին ԳԽ նախագահի պաշտոնի համար առաջադրվեցին Լևոն Տեր-Պետրոսյանը, Վլադիմիր Մովսիսյանը, Պարույր Հայրիկյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Վազգեն Մանուկյանը և Ռաֆայել Ղազարյանը։ Ինքնաբացարկ հայտնեցին Հ.Սիմոնյանը, Վ.Մանուկյանը և Ռ.Ղազարյանը։* Քվեարկություններից հետո մնաց երկու թեկնածու՝ ՀԿԿ ներկայացուցիչ Վլադիմիր Մովսիսյանը և ՀՀՇ ներկայացուցիչ Լևոն Տեր-Պետրոսյանը։ Թեկնածուներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ծրագիրը, իր տեսլականը Հայաստանի ապագայի վերաբերյալ։ Ըստ էության Գերագույն խորհրդի հարթակի միջոցով հայ հասարակությանը ներկայացվեց Հայաստանի քաղաքական ուղու երկու ճանապարհ՝ Հայաստանի սուվերենություն «նորացվող» ԽՍՀՄ կազմում (Վ.Մովսիսյան) և Հայաստանի անկախացում ԽՍՀՄ-ից (Լևոն Տեր-Պետրոսյան)։ Քանի որ հարցը բավական մանրամասն ներկայացված է պատմագիտական գրականության մեջ, անդրադառնանք միայն երկու խոսույթին։

Վ.Մովսիսյանի ծրագրային ելույթն ըստ էության ներկայացնում էր հայ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, «հին» և «նոր» սերնդի ձգտումները, դիրքորոշումները արտահայտելու ձևերը, աշխարհայացքային տարբերությունները։ Վ.Մովսիսյանի ծրագրով[1] նախատեսվում էր մշակել նոր սահմանադրություն։ Նա առաջարկում էր ընդունել հանրապետության սուվերենության մասին հռչակագիր և օրենք, որը կապահովեր Հայաստանի անկախությունը նորացվող Խորհրդային Միության կազմում։ Վ.Մովսիսյանի ծրագրով Հայաստանը պառլամենտական հանրապետություն պետք է լիներ, քանի որ իշխանության բարձրագույն մարմինը Գերագույն խորհուրդն էր։ Միայն ԳԽ համաձայնությամբ ընդհանուր միութենական օրենքները կարող էին տարածվել Հայաստանի վրա։ Հայկական հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ անմիջական կապեր պետք է ունենար այլ պետությունների հետ, դիվանագիտական ներկայացուցչություններ ունենար հայաշատ կենտրոններում, դառնար ՄԱԿ-ի անդամ։ Վ.Մովսիսյանի ծրագրով պետք է չեղյալ հայտարարվեին 1920-ական թվականներին կնքված ոչ հայանպաստ պայմանագրերը։ Նա պաշտպանում էր Հայ դատը և պահանջատիրությունը, խոստանում էր հետամուտ լինել 1915 թ. ցեղասպանության միջազգային ճանաչմանը։ Տնտեսական բնագավառում նա հանդես եկավ

[1] ՀԱԱ, ֆ.207, գ.62, գ.52, էջ 2։

Հայաստանի լիիրավ տնտեսական ինքնուրույնության, սեփականության տարբեր ձևերի գոյության, ազատ ձեռներեցության, արտասահմանյան կապիտալի ներգրավման օգտին: Անդրադառնալով Արցախի հարցին, նա քննադատեց ԽՍՀՄ անցյալի սխալները և հակահայ գործելակերպը, ինչպես նաև «Ադրբեջանի կողմից տարվող ապարտեիդի և գաղութացման» քաղաքականությունը: Որպես Արցախի՝ մայր հայրենիքի հետ վերամիավորման առաջին քայլ, Վ.Մովսիսյանը դիտում էր Արցախում օրինական իշխանությունների, մարզի խորհրդային և կուսակցական մամիների վերականգնումը, Ադրբեջանի կազմկոմիտեի անօրինական գործողությունների դադարեցումը: Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկեր Արցախի տնտեսական ինտեգրման ուղղությամբ:

Ի տարբերություն Վ.Մովսիսյանի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը ոչ թե ծրագրային էր, այլ, ինչպես ինքն էր նշում՝ քաղաքական: Նրա տեսլականը Հայաստանի ապագա ուղու վերաբերյալ հետևայլն էր .

ինքնուրույն տնտեսական համակարգի վրա հաստատված ազգային անկախ պետականություն,

միջազգային իրավունքի նորմերի վրա հիմնված իրավական պետություն,

համամարդկային արժեքների, մարդու իրավունքների վրա խարսխված դեմոկրատական համակարգ:

Ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի ծրագրի Հայաստանի օրակարգային հարցն էր այլ երկրների, այդ թվում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների «իրավահավասար հիմունքներով երկկողմանի քաղաքական և տնտեսական» պայմանագրերի կնքումը: Նա բացառեց հանրապետության տարածքում միութենական սահմանադրությունն ու միասնական օրենսդրությունը: Նշեց, որ միության կազմում բարդ հարցերից է բանակի հարցը: Չբացառեց խորհրդային կամ ռուսական բանակի ժամանակավոր ներկայությունը հանրապետությունում՝ «միջազգային պայմանագրերով սահմանված ռազմական բազաների կարգավիճակով»[1]: Թեև Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթում անկախության հայտ ներկայացվեց, սակայն պարզ էր, որ օրենսդիր մարմին մտած նոր ուժերը դեռևս չունեն անկախության հասնելու հստակ ծրագիր: Դրա մասին նա պարզորոշ խոսեց իր ելույթում, ասելով. «Իսկ թե ինչպիսի հանգրվաններով կիրականացվի ազգային անկախ պետականության վերականգնումը, դա արդեն կախված է ոչ թե առանձին անհատների քմահաճույքից կամ կուսակցությունների թելադրանքից, այլ կոնկրետ քաղաքական իրավիճակներում ժողովրդի կամքն արտահայտող ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի դիրքորոշումից, անհրաժեշտության դեպքում նաև հանրաքվեի միջոցով կայացած համաժողովրդական վճռից»:[2] Լևոն Տեր-Պետրոսյանն երկու տարվա պայքարի շոշափելի նվաճում համարեց Հայաստանի Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի և 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումները Արցախի և Հայաստանի վերամիավորման մասին, հայկական ատոմակայանի փակումը և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման աշխատանքի

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.52, էջ 65:
[2] Նույն տեղում, էջ 66:

դադարեցման մասին ընդունված որոշումը[1], 1915 թվականի հայոց ցեղասպանության դատապարտման մասին հրապարակված օրենքը, 1918 թվականի մայիսի 28-ը որպես հայոց պետականության վերականգնման օր և Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը որպես ազգային խորհրդանիշ ճանաչելու որոշումը…»[2]: Միակ ուժը, որ «ընդունակ է երկիրը դուրս բերել ճգնաժամային իրավիճակից և կտրուկ շրջադարձ կատարել դեպի ազգային նպատակներ Հայաստանի Գերագույն խորհրդի դեմոկրատական թևն է…»:[3] Իր թեկնածության առաջադրման կապակցությամբ նշեց, որ ՀՀՇ-ում կային ավելի արժանի թեկնածուներ: Նրանցից առանձնացրեց Վազգեն Մանուկյանին, որին ներկայացրեց որպես «Ղարաբաղ» կոմիտեի կազմակերպիչ և բուն ղեկավար: «Ամբողջ «Ղարաբաղ» կոմիտեն, այնպես է ստացվել բնականորեն, որ կազմվել է Վազգեն Մանուկյանի շուրջը, 20-25 տարվա հնություն ունեցող ընկերները հավաքվել են նրա շուրջը և ստեղծել ահա այդ կորիզը»:[4] Նա է «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական գաղափարախոսը և ՀՀՇ ծրագրի հեղինակը[5]:

ԳԽ նախագահի ընտրությունը, որն ընթացավ 4 փուլով, ավարտվեց 1990թ. օգոստոսի 4-ի քվեարկությամբ, որի արդյունքում Վ.Մովսիսյանին կողմ քվեարկեց 76 պատգամավոր, դեմ՝ 144, Լևոն Տեր-Պետրոսյանին կողմ՝ 140, դեմ՝ 80 պատգամավոր: ՀԽՍՀ ԳԽ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը[6], Գերագույն խորհուրդը ընտրեց անկախության ուղին:

ՀԽՍՀ ԳԽ գործունեությունը մինչև Անկախության հռչակագրի ընդունումը: ՀԽՍՀ ԳԽ առաջին նիստի բացմանը՝ 1990թ. հուլիսի 20-ին ներկա էին 175 ՀԽՍՀ ժողովրդական պատգամավորներ: ՀԽՍՀ սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն առաջին նիստը վարում էր Կենտրոնական ընտրությունների հանձնաժողովի նախագահ Ռ.Պ.Ամիրյանը, ով նշեց, որ «…վերակառուցումը փոխադրվել է գործնական իրականացման հարթության վրա»[7]: Նա թվարկեց կուտակված բոլոր խնդիրները, որոնք պետք է լուծեր ԳԽ-ն և Հայկական ԽՍՀ տասներկուերորդ գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը՝ ներկաների ծափահարությունների տակ, հայտարարեց բացված:

Առաջին նիստին հրավիրված էին ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի անդամներ, ՀԽՍՀ 11-րդ գումարման ԳԽ նախագահության անդամներ, ժողովրդական դեպուտատներ, ԿԸՀ անդամներ, ԶԼՄ և սփյուռքի ներկայացուցիչներ: 1988 թ. Արցախյան շարժումը ժողովրդավարական մեծ ալիք էր բարձրացրել՝ թափանցիկ գործելաոճ և հրապարակայնություն թելադրելով անկախացող

[1] Հաջորդ 2 տարվա ընթացքում Արցախի և Հայաստանի միավորման հարցը կդիտվի անիրագործելի և այդ ժամանակահատվածի համար սխալ, իսկ մյուս «մեծ ձեռքբերումները»՝ ատոմակայանի և Նաիրիտի փակումը՝ քաղաքական նպատակներով արված, ինչից անհրաժեշտ էր հրաժարվել հանրապետության տնտեսական աճն ապահովելու համար:

[2] Նույն տեղում, էջ 70:

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.52, էջ 72:

[5] Այդ շրջանում գաղափարների սրնթաց փոփոխության մասին է խոսում նաև այս դրվագը, քանի որ 2 տարի անց Լևոն Տեր-Պետրոսյանը կբնութագրի Վ.Մանուկյանին այլ կերպ, ավելին՝ նրանք կդառնան քաղաքական անհաշտ հակառակորդներ:

[6] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.52, էջ 224:

[7] Նույն տեղում , էջ 8:

հանրապետության խորհրդարանին: Քանի որ հասարակությունը մեծ հետաքրքրություն ուներ առաջին նիստի նկատմամբ, այն հեռարձակվում էր հեռուստատեսությամբ՝ ուղիղ եթերով:

Արցախյան ազգային-ազտագրական շարժման սկսվելուց ի վեր կային բազմաթիվ զոհեր, ուստի դեպուտատներից մեկի՝ Գ.Բաղդասարյանի, առաջարկով մեկ րոպե լռությամբ ներկաները հարգեցին ազգային-ազատագրական շարժման ընթացքում զոհվածների հիշատակը: Նորընտիր Գերագույն խորհրդի օրհնության և ողջույնի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Ձայների մեծամասնությամբ առաջին նիստին որոշում ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճի էլեկտրոնային համակարգի մասին: Իշխանության եկող նոր ուժերը չէին վստահում խորհրդային էլիտային, այդ պատճառով ամենինչ վերցնում էին իրենց հսկողության տակ: Որոշում ընդունվեց ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների կազմից ՀԽՍՀ ԳԽ քարտուղարություն ընտրելու մասին: ՀԽՍՀ ԳԽ քարտուղարության ղեկավար հաստատվեց Արա Սահակյանը: Հաստատվեց ՀԽՍՀ ԳԽ մանդատային հանձնաժողովի կազմը 11 անդամով: Մանդատային հանձնաժողովի կողմից, ընտրությունների արդյունքների քննման հիման վրա, ժողովրդական պատգամավորների լիազորությունների ճանաչման գործընթաց սկսվեց:

Խառը ժամանակաշրջան էր: Հայ-ադրբեջանական հարաբերությունները՝ Սումգայիթի և Բաքվի հայերի ջարդերից հետո, բավական լարվել էին: Ադրբեջանցիների կողմից սահմաններին անընդհատ սադրանքներ էին լինում: Դեռևս պատերազմի նախապատրաստական փուլն էր: Ղեկավարության մի մասը, գուցե չգիտակցելով, որ բախումը անխուսափելի է, փորձում էր համոզել, որ ադրբեջանցիների հետ հնարավոր է «լեզու գտնել», մյուս մասը կանխատեսում էր, որ լինելու են լայնամասշտաբ բախումներ և գտնում էր, որ անհրաժեշտ է շուտափույթ զինվել և պատրաստվել: Կային նաև այնպիսիք, որ կարծում էին, որ քանի Հայաստանն ու Ադրբեջանը ԽՍՀՄ կազմում են, պատերազմ չի լինի: Մինչդեռ լոկալ բախումներն արդեն սկսվել էին: Հաշվի առնելով հայերի անկախության անթաքույց ձգտումը, Մոսկվան ակնհայտորեն սպասարկում էր Ադրբեջանի շահերը: Սկսվել էր ազգային ստվերային զինվորական խմբավորումների ձևավորման գործընթաց: Դրա հետ մեկտեղ աստիճանաբար ակտիվանում էին քրեական տարրերը: Թե՛ առաջիններին, թե՛ երկրորդներին զենք էր հարկավոր, այդ պատճառով հարձակումներ էին լինում խորհրդային զինվորական ստորաբաժանումների վրա՝ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում: Գերագույն խորհրդի նիստերին հաճախ էին լինում հաղորդումներ այդ դեպքերի վերաբերյալ: Այդ շրջանի առանձնահատկությունն էր, որ Գերագույն խորհուրդն իր վրա էր վերցնում նույնիսկ այն խնդիրները, որոնք կառավարության կամ տեղական խորհուրդների իրավասության տակ էին: Օրինակ, ՀԽՍՀ ԳԽ հենց առաջին նիստին ՀԽՍՀ ներքին գործերի մինիստր Լ.Գալստյանը[1] հայտնեց, որ Հոկտեմբերյանի շրջանի Մարգարա գյուղում հարձակում է եղել զինվորական մասի վրա, զենք հափշտակվել և պատանդ վերցվել 1 սպա և 2 զինվոր: Կազմվել էր հանձնաժողով, որի մեծ մասը պատգամավորներ էին: Լ.Գալստյանը դիմեց ՀԽՍՀ ԳԽ-ին, միջնորդելով թույլտվություն տալ, որ պատգամավորները գնան բանակցելու Արտաշատ ոմն Սամվել Մարգարյանի հետ[2]:

[1] ՀԽՍՀ Ներքին գործերի վերջին նախարար (1990 թ. հունիս-օգոստոս):
[2] Հետագայում պարզվեց, որ նա Անկախության բանակի Արտաշատի ջոկատի հրամանատարն էր:

Լ.Գալստյանը ներկայացրեց հանձնաժողովի կազմը՝ «Արտաշես Գեղամյան[1], Հրանտ Խաչատրյան, Ռաֆայել Ղազարյան, Լևոն Գալստյան, Ռաֆայել Մխիթարյան՝ Արտաշատի շրջկոմի քարտուղարը, Աշոտ Նավասարդյան՝ անկախականներից, Համլետ Հովհաննիսյան, Արտավազդ Գևորգյան՝ հանրապետության դատախազը, Վազգեն Սարգսյան՝ ժողովրդական դեպուտատ և Միխայիլ Սուրկով՝ բանակի քաղբաժնի պետը»:[2]

Հայաստանի անկախացման քայլերից էր նաև խորհրդային կենտրոնական իշխանությունների որոշումներին հակառակվելը: Ա.Գրոմիկոյի[3] որոշմամբ Պ.Հայրիկյանին վտարել էին ԽՍՀՄ-ից: Գերագույն խորհուրդը քննարկեց այդ հրամանին հակառակվելու հարցը: Պատգամավորների մի մասը գտնում էր, որ պետք է գնալ բացահայտ ընդդիմության, քննադատել այդ որոշումը, մյուսը գտնում էր, որ պետք չէ բացահայտորեն սրել հարաբերությունները Կենտրոնի հետ, ամպագոռգոռ հայտարարություններ անել, այլ ուղղակի հաստատել Հայրիկյանի ՀԽՍՀ քաղաքացի լինելը: Ի վերջո, 1990 թ. հուլիսի 25-ին ՀԽՍՀ ԳԽ-ն ընդունեց հետևյալ որոշումը.

«Հաշվի առնելով, որ Հայկական ԽՍՀ քաղաքացի Պարույր Հայրիկյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 21-ի հրամանագրով ԽՍՀՄ, միաժամանակ նաև Հայկական ԽՍՀ քաղաքացիությունից զրկվել և երկրից վտարվել է մարդու իրավունքների դեկլարացիայի նորմերի, ԽՍՀՄ քաղաքացիության մասին 1990թ. մայիսի 25-ի օրենքի 23-րդ հոդվածի, այդ օրենքի կիրառման կարգի մասին որոշման 4-րդ կետի, ինչպես նաև Հայկական ԽՍՀ սուվերենության խախտմամբ ու ղեկավարվելով Հայկական ԽՍՀ սահմանադրության 71-րդ հոդվածով, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում է. Պարույր Արշավիրի Հայրիկյանին համարել Հայկական ԽՍՀ քաղաքացիությունից չզրկված 1988 թ. հուլիսի 21-ից»[4]: 1990 թ. հուլիսի 30-ի ՀԽՍՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով՝ ճանաչվեցին ԽՍՀՄ-ից արտաքսված Պ.Հայրիկյանի պատգամավորական լիազորությունները և ծավալվեց նրան Հայաստան վերադարձնելու գործընթաց:

1990թ. հուլիսի 26-ին ԳԽ-ում ստեղծվեց հանրապետության վիճակի օպերատիվ վերահսկման ժամանակավոր հանձնաժողով: Դրա համար երկու պատճառ կար՝ հանրապետությունում քրեական հանցագործությունների թվի աճը, անհայտ զինված կազմավորումների ակտիվացումը և ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս.Գորբաչովի հրամանը՝ անօրինական զինված կազմավորումների զինաթափման վերաբերյալ: Քանի որ զինվելու նույնատիպ գործընթացներ էին գնում Ադրբեջանում, Հայաստանի իշխանությունները մտավախություն ունեին, որ զինաթափումը կարող է միակողմանի լինել, ինչը կվտանգեր հայ բնակչությանը: Հայաստանին անհրաժեշտ էր լուծել խնդիրը սեփական ուժերով, թույլ չտալով, որ դրան խառնվեին կենտրոնական իշխանությունները: Ներքին գործերի նախարար Վ.Սիրադեղյանը և պետանվտանգության կոմիտեի նախագահ Լ.Գալստյանը կանչվել էին ՀԽՍՀ ԳԽ և հաշվետվություն ներկայացրել, սակայն դա չէր բավարարել ընդդիմադիր պատգամավորներին: Լ.Գալստյանը Գերագույն խորհրդում հայտարարեց, որ «…ներքին գործերի մինիստրության աշխատակիցները իրենց զինվածությամբ, իրենց պատրաստակամությամբ չեն կարող այդ զինված

[1] Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնակատարն էր:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.43, էջ 30-31:
[3] Անդրեյ Գրոմիկո՝ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:
[4] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.45, էջ 3:

խմբերին զինաթափել…»[1], բացի այդ Գերագույն խորհուրդն արգելել էր ներքին զորքերի ստարոբաժանումներն օգտագործել ներքին խնդիրների լուծման համար:

Գերագույն խորհրդում ստեղծվեց օպերատիվ վերահսկման ժամանակավոր հանձնաժողով, որը գլխավորեց ՍԻՄ[2] նախագահ Հրանտ Խաչատրյանը: Դրա կազմում ընդգրկված էին 17 անդամներ: Այն պետք է ուսումնասիրեր ԽՍՀՄ պրեզիդենտի հրամանագիրը և, ի պատասխան դրան, մշակեր ՀԽՍՀ ԳԽ որոշման այնպիսի նախագիծ, որը մի կողմից պատրանք ստեղծեր, որ հրամանագիրը իրագործվում է, մյուս կողմից չվնասեր նոր կազմավորվող և Գերագույն խորհրդի շուրջը համախմվող ազգային զինվող կազմավորումներին: Զինված կազմավորների մի մասի անդամները խիստ դժգոհ էին իշխանությունների անվճռական և զսպող քաղաքականությունից և դրա մեջ տեսնում էին անկախության գաղափարից և Հայաստանի և Արցախի վերամիավորման, միացյալ և անկախ Հայաստան ունենալու գաղափարից հետնահանջ: Այդ պատճառով նրանք ավելի հեշտ էին շփվում Գերագույն խորհրդի հետ, որտեղ բացի ՀՀՇ-ից կային ընդդիմադիր կամ չեզոքությունը պահող պատգամավորական խմբակցություններ: Օպերատիվ վերահսկման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Հ.Խաչատրյանը դիմեց Գերագույն խորհրդին իր լիազորություններն ընդլայնելու խնդրանքով, սակայն մերժում ստացավ: Հանձնաժողովը փորձում էր ստանձնել միջանկյալ օղակի դեր կառավարության և զինված կազմավորումների միջև, ինչը բացարձակ դուր չէր գալիս Վ.Սիրադեղյանին, որի ազդեցությունն ուժային կառույցներում սկսել էր արագ աճել:

Հրանտ Խաչատրյանը 1990թ. օգոստոսի 1-ին հրապարակեց մի շարք կազմակերպություններից (Հայաստանի հանրապետական կուսակցություն, «Անկախության բանակ», «Ազգային ինքնորոշում» միավորում», «Հայ դատի պաշտպանության» ընկերություն», «Սահմանադրական իրավունք» միություն, Հայաստանի քրիստոնյա ժողովրդական միություն, «Հայաստանի դաշնակցություն, «Միացում» ընկերություն, «Մուշ» ազգային միություն, «Հայոց ազգային բանակ», «Սասունցի Դավիթ» կազմակերպություն, «Մեծն Տիգրան», «Ապավեն», «Նորք», «Արաբո», «Արցախի պաշտպանության խորհուրդ», «Մալաթիա», «Սեբաստիա», «Աղաջան» ինքնապաշտպանության ջոկատները) ԳԽ-ին հասցեագրված նոր նամակը, որում ողջունվում էր Հայաստանի պաշտպանության խորհրդի ստեղծման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիսի 3-ի որոշումը և առաջարկում էր, որ իրենց ներկայացուցիչները ընդգրկվեն այդ խորհրդի կազմում: Առաջադրվել էր 33 թեկնածու: ՀԽՍՀ ԳԽ-ում որոշվեց ընդունել առաջարկը, բայց այդ թիվը կրճատել:[3]

Պատգամավորները պետանվտանգության մարմինների առջև բարձրացրեցին այս կամ այն պատճառով ադրբեջանցիների մոտ հայտնված հայերի հարցը, անհանգստություն հայտնելով նրանց ճակատագրերի վերաբերյալ: Լ.Գալստյանը ԳԽ-ին տեղեկատվություն տվեց Ադրբեջանում գտնվող հայ կալանավորների մասին: Ըստ Լ.Գալստյանի հաղորդագրության՝ 1988թ. Հայաստան

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.47, էջ 26:
[2] Սահմանադրական իրավունք միությունը հիմնադրվել էր 1989 թվականին Հրանտ Խաչատրյանի կողմից:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.51, էջ 110:

էր վերադարձվել 54 հայ, 1989թ.՝ 152, 1990թ.՝ 43: Պետանվտանգության մարմինների տվյալներով 1990թ. հուլիսի դրությամբ Բաքվի մեկուսարաններում կար 31 հայ կալանավոր[1]:

Երբեմն ԳԽ-ն լսում էր տարածաշրջանի քաղաքական վիճակի մասին հաղորդումներ: Օրինակ, լսվեց Պետանվտանգության կոմիտեի նախագահ Վ.Բաղամյանցի հաղորդումը Ադրբեջանում տիրող իրավիճակի մասին, երբ փորձ էր արվում վերականգնել Ադրբեջանի ժողովրդական ազգային ճակատի պաշտպանության կոմիտեն: ԳԽ-ում լսվեց իրանա-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակը, որը վերահսկում էին ԽՍՀՄ ՊԱԿ-ի սահմանապահ զորքերը: Ադրբեջանում ստեղծվել էր «Զանգեզուրի փրկության, ազատագրության կոմիտե»[2]: Այս տեղեկատվությունները ստանալուց հետո 1990 թ. օգոստոսի 6-ին ԳԽ-ում ստեղծվեց ազգային անվտանգության կոնցեպցիան մշակող հանձնաժողով:

Գերագույն խորհուրդը զբաղվելով ամենատարբեր հիմնախնդիրներով՝ սոցիալ-տնտեսականից սկսած արտաքին քաղաքականով ավարտված, չէր հասցնում կատարել իր իսկ հաստատած օրակարգը, տուժում էր ԳԽ իրավաստեղծ գործունեությունը:

1990 թ. օգոստոսի 6-ին ՀԽՍՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց Գագիկ Հարությունյանը: Սկսվեց ԳԽ մշտական հանձնաժողովների ձևավորման գործընթաց, որոնց **նախագահները, Գերագույն խորհրդի գործունեության ընթացքում պարտադիր հաշվետվություն պետք է ներկայացնեին կատարած աշխատանքի մասին: Հաշվետվությունները մանրամասն քննարկվում և գնահատվում էին ԳԽ-ի կողմից:**

Գերագույն խորհրդի գործունեությունը ուսումնասիրելով կարելի է պատկերացում կազմել՝ ինչպես էր ձևավորվում պետական նոր նոմենկլատուրան, ինչպես էին «հրապարակից» խորհրդարան եկած մարդիկ յուրացնում պետական աշխատանքի այբուբենը:

Թեպետ քաղաքական անցուդարձը բավական ժամանակ էր խլում Գերագույն խորհրդից, սակայն սկսվել էր նաև խորհրդարանի վերակառուցման աշխատանք: 1990 թ. օգոստոսի 11-ի նիստում հաստատվեց ՀԽՍՀ ԳԽ ժամանակավոր կանոնակարգը: ՀԽՍՀ ԳԽ-ն որոշում ընդունեց ԳԽ քարտուղարի պաշտոն հիմնելու մասին, այդ կապակցությամբ կատարել փոփոխություններ ՀԽՍՀ սահմանադրության մեջ: ԳԽ քարտուղարի պաշտոնում առաջադրվեց Արա Սահակյանը:

Օրենսդիր և գործադիր մարմինների հակասությունը այս փուլում հանգուցալուծվեց կառավարության հրաժարականով: 1990 թ.օգոստոսի 13-ին ԳԽ հատուկ նիստ հրավիրվեց, որի ժամանակ Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանցը ՀԽՍՀ կառավարության լիազորությունները վայր դրեց: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը հանձնարարեց կառավարությանը շարունակել իր պարտականությունների կատարումը մինչև նոր կաբինետի ձևավորումը: ՀԽՍՀ Սահմանադրությամբ Հայաստանի ԳԽ նախագահին իրավունք էր վերապահված առաջադրել Մինիստրների խորհրդի նախագահի թեկնածու:

Լևոն Տեր-Պետրոսյանը նոր պրակտիկա մտցրեց՝ մասնագետների փոխարեն նշանակելով քաղաքական գործիչների: Նա արատավոր երևույթ համարեց ԽՍՀՄ վերջին տարիներին ընդունված սկզբունքը՝ նշանակելու կառավարության ղեկավարի պաշտոնին տեխնոկրատների, նշեց, որ քաղաքակիրթ աշխարհում վարչապետի պաշտոնը զբաղեցնում են ոչ թե

[1] ՀԱԱ,ֆ.207, գ.62, գ.47:
[2] ՀԱԱ,ֆ.207, գ.62, գ.62, Գ-46, էջ 3:

տեխնոկրատները, այլ քաղաքական գործիչները: Լևոն Տեր-Պետրոսյանը նշեց՝ «…այսօր այդպիսի քաղաքական գործչի բոլոր հատկանիշներին համապատասխանում է Երևանի պետական համալսարանի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, մասնագիտացած՝ մաթեմատիկայի կիրառությունը տնտեսության մեջ բնագավառում մասնագիտացումը անցկացրել է Նովոսիբիրսկում՝ տնտեսագետ, ակադեմիկոս Մակարովի ղեկավարությամբ, Վազգեն Մանուկյանը»[1]: Նա բնորոշեց Վազգեն Մանուկյանին որպես «քաղաքական աշխարհայացքով, խորապես ազգային մտածողությամբ, կամային ընդգծված հատկանիշներով, որ չափազանց անհրաժեշտ է այդպիսի պաշտոնի համար, կոլեգիալ աշխատանքի կարողությամբ, համառ և հետևողական է, միաժամանակ՝ հանդուրժող և իր սխալներն ընդունող ու վերանայող»:[2]

Վազգեն Մանուկյանը Գերագույն խորհրդում ներկայացրեց Հայաստանի զարգացման վերաբերյալ տեսլականը: Վերլուծեց տիրող իրավիճակը՝ ԽՍՀՄ-ից ժառանգած քայքայված տնտեսություն, աղետի գոտի, փախստականներ, Արցախի հարց: Նախատեսվում էր Կենտրոնի հետ կապերը փոխարինել բազմաթիվ նոր տնտեսական կապերով: ՀՀՇ ծրագրային դրույթների համաձայն ներկայացրեց տնտեսության վերափոխման ծրագիրը՝ պլանային տնտեսության փոխարինում շուկայական մեխանիզմներով կարգավորվող տնտեսության, մասնավոր սեփականություն, բաժնետիրական ընկերություններ: Վ.Մանուկյանը բարձրացրեց սեփականաշնորհման անհրաժեշտության հարցը, սակայն նշեց, որ «միառժամանակ պետք է պահել ապագա չունեցող սոցիալիստական տնտեսությունը, տնտեսության մի մասը, նպատակ ունենալով զերծ մնալ մեծ գործազրկությունից և տնտեսության համար ինչ որ ժամանակ ստանալ անհրաժեշտ հումք»:[3] Կարևոր համարեց ֆինանսական նոր աղբյուրների հայթայթումը և Մոսկվայից կախվածության փոքրացումը: Վազգեն Մանուկյանն իր ելույթում նշեց, որ կառավարությունը առաջիկայում չի կարողանա բարելավել բնակչության սոցիալական վիճակը, բայց պետք է նպատակաուղղված աշխատի վիճակի կայունացման ուղղությամբ: Կարևորեց լայն ժողովրդավարությունը և կարգ ու կանոնի հաստատումը: Նշեց, որ դրա ուղիներից է անօրինական զինված կազմավորումների վերացումը, դրանք վերափոխված ՆԳՆ հսկողության տակ դնելը: Դրեց նաև հետագայում ազգային բանակի ստեղծման խնդիրը:

Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ իշխանական նախորդ լծակների թուլացման պայմաններում երկրում պետական գույքի հափշտակում էր սկսվել: Ընդ որում դա արվում էր թե՛ պետական մարմինների մակարդակով, թե՛ ձեռնարկությունների և գործարանների, թե՛ թալանով ապրող որոշ զինված ջոկատների մակարդակով: Կարգ ու կանոնի հաստատումը խիստ անհրաժեշտ էր: Գերագույն խորհուրդը Վ.Մանուկյանին մեկ ամիս ժամանակ տվեց կառավարության նոր կազմ առաջադրելու համար:

Անհանգստացնող էր սահմանների վիճակը: Գերագույն խորհրդի պատգամավորներից ստեղծվել էր մի խումբ, որը պետք է գնար Նախիջևանի հետ սահման և ստուգեր սահմանների ամրության հարցը:

[1] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.58, էջ 5:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 58, էջ 12:

Անկախացող հանրապետությունը հաստատում էր առաջին ինքնուրույն միջազգային հարաբերությունները: Անցումային շրջանում Գերագույն խորհուրդը վավերացրեց 148 միջազգային պայմանագիր[1]:

Քայլեր արվեցին ԳԽ-ն ոչ միայն որպես օրենսդիր, այլ նաև ներկայացուցչական մարմին զարգացնելու ուղղությամբ: ՀՀ ԳԽ նախագահության որոշում կայացվեց՝ «ՀՀ ԳԽ վարչական շենքի առջևի այգին քաղաքացիների հանգստի համար տրամադրելու մասին»[2], պատգամավորները այցելում էին իրենց ընտրատարածքներ, հանդիպում ընտրողների հետ և ԳԽ-ի նիստերում բարձրաձայնում նրանց հուզող հարցերը: Պատգամավոր Թ.Խ.Գդլյանի առաջարկությամբ ժողովրդական դեպուտատների հերթապահություն սահմանվեց քաղաքացիների ընդունելության համար:

ՀՀ ԳԽ-ն քննարկում և արձագանքում էր գործադիր մարմինների կարևորագույն որոշումներին, որոնք կապված էին անկախացման գործընթացի հետ: Այսպես, ՀՀ ԳԽ նախագահությունը ընդունեց որոշում «ՀՀ Լուսավորության նախարարության կոլեգիայի 1991 թ. մարտի 15-ի որոշման մասին[3]», որի համաձայն ռուսական հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանները պետք է անցնեին հայերեն ուսուցման, իսկ 5-րդ և բարձր դասարաններում պետք է ապահովվեր «հայերեն ուսուցմանը կամավոր անցնելու սկզբունքը, դրա կիրառման համար ստեղծելով նպաստավոր պայմաններ»[4]:

Որքան մոտենում էր անկախության հռչակագրի ընդունումը, այնքան լարվածությունը մեծանում էր: Օգոստոսի 21-ին Գերագույն խորհուրդը լսեց Մ.Սուրկովի[5] հաղորդումը Էրեբունու զորամասից առևանգված զինամթերքի մասին: Նրա ասելով մեծ քանակությամբ առևանգված հրանետային միջոցները հարձակողական զենք էր: Մ. Սուրկովը խորհրդարանին զգուշացրեց, որ ստիպված կլինի դիմել վճռական գործողությունների, այլ կերպ ասած սպառնաց ուժ գործադրել: Գերագույն խորհուրդը պետք է լուծեր նաև այդ տիպի հարցեր:

1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց Հայաստանի անկախության հռչակագիրը[6]: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Գերագույն խորհրդի գործունեությունը անկախության հռչակագրի ընդունումից հետո: Անկախության հռչակագրի ընդունումից հետո Գերագույն խորհրդի օրակարգը հարստացվեց պետականաշինության հարցերով: Քննարկվեցին մի շարք օրինագծեր՝ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը Հայաստանի Հանրապետությանի իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացման մասին», «Հայաստանի Հանրապետության օրենքը ժողովրդական վերահսկողության Կոմիտեն վերացնելու մասին», «Սահմանադրական հանձնաժողով կազմելու մասին» և այլն: Հետևողական աշխատանք էր

---

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.4, էջ 20:
[3] Խոսքը գնում է **ՀՀ լուսավորության նախարարության կոլեգիայի 1991 թ. մարտի 15-ի «Ազգային միասնական հանրակրթական դպրոցի մասին որոշման կատարման ընթացքը և հետագա խնդիրները» որոշման մասին:**
[4] ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ.4, էջ 46:
[5] Միխայիլ Սուրկով՝ Խորհրդային 7-րդ բանակի հրամանատար:
[6] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.55, էջ 8:

տարվում Գերագույն խորհրդի աշխատանքը կատարելագործելու ուղղությամբ: Քննարկվեցին՝ «ՀՀ ԳԽ մշտական հանձնաժողովների կանոնադրությունը հաստատելու մասին»՝, «Գերագույն խորհրդի մշտական և հատուկ հանձնաժողովների համալրման մասին» նախագծերը: Սկսվեց անկախացող հանրապետության տոնացանկի հաստատման գործընթացը[1]:

1990 թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ԳԽ-ն որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհրդի կառուցվածքի վերաբերյալ առաջարկությունների մասին», որի համաձայն կազմվեցին մինիստրությունները և պետական կոմիտեները:

Թեպետ ՀՀ իշխանությունները նախընտրում էին զգուշավոր քաղաքականություն վարել ԽՍՀՄ-ից անկախանալու ճանապարհին, սակայն երբեմն հարաբերությունների սրացումից չէր լինում խուսափել: Այսպես, ՀՀ ԳԽ-ում 1990 թ. նոյեմբերի 13-ին Վանո Սիրադեղյանը իր ելույթում ընդգծեց, որ Հայաստանում գոյություն ունի 2 կազմակերպություն, որոնք ղեկավարվում են դրսից՝ ՀԿԿ կենտկոմը և ՊԱԿ-ը, «որը ոչ մի անունով չի ենթարկվում այսօր Հայաստանի պառլամենտին, կառավարությանը, Հայաստանին առհասարակ, և հայտնի չէ այդ կազմակերպության, ՊԱԿ-ի չնայած նախագահի մեջ էլ է շարժ նկատվել, ընդերքներում ի՞նչ է կատարվում, ու՞մ համար են աշխատում այդ կազմակերպությունները և ու՞մ դեմ են աշխատում»[2]: Կրքերի բորբոքման պատճառը Հայաստանի Կոմունիստական կուսակցության համագումարն էր, որտեղ քննադատվել էր անկախացման գործընթացը: Այդ ելույթից հետո **ստեղծվեց ՊԱԿ-ի գործունեությունը ուսումնասիրող հանձնաժողով (նախագահ՝ Ա. Մանուչարյան):**

Սկսվեց նախկին քաղբանտարկյալների իրավունքների վերականգնման գործընթացը: ՀՀ դատախազությանը 1990 թ. սեպտեմբերի 21-ի ՀՀ ԳԽ որոշմամբ[3] հանձնարավեց երկամսյա ժամկետի ընթացքում ԳԽ նստաշրջանում պատասխանել 28 պատգամավորների հարցապնդմանը ՀՀ նախկին քաղբանտարկյալների քաղաքացիական իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Օրինաստեղծ աշխատանքը ժամանակ էր պահանջում: Գերագույն խորհրդի աշխատանքի սկզբում, ինչպես վերը նշվեց, պատգամավորները ծանրաբեռնվում էին պառլամենտին չվերաբերվող հարցերով, դրա պատճառով նախապես հաստատված օրակարգը չէր իրագործվում, կարևոր օրենքների նախագծերի մշակումը հետ էր ընկնում: Այդ բացը շտկելու համար 1990 թ. հոկտեմբերի 1-ի ԳԽ որոշմամբ սահմանվեց, որ շաբաթվա առաջին 2 օրը պատգամավորները պետք է մասնակցեն նստաշջանին, իսկ մյուս օրերը աշխատեն մշտական հանձնաժողովներում օենքների նախագծերի վրա:

1990 թ. հոկտեմբերի 9-ին և 10-ին Ստեփանակերտում, առանց Գերագույն խորհրդի համաձայնության, կալանավորվել էին ՀՀ ԳԽ երկու պատգամավորներ՝ Ռոլես Աղաջանյանը և Համլետ Գրիգորյանը: Ըստ էության դա «ԽՍՀՄ-ում ժողովրդական պատգամավորների կարգավիճակի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական պատգամավորների կարգավիճակի մասին» օրենքների խախտում էր: Դրա վերաբերյալ ՀՀ ԳԽ-ն հատուկ որոշում

[1] Մինչև տոնացանկի հաստատումը ՀՀ ԳԽ 1990 թ. հոկտեմբերի 30-ի նիստին ժամանակավորապես որոշվեց չնշել նոյեմբերի 7-ը՝ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի օրը, որպես տոն և շքերթ չկազմակերպել: Խորհրդային խորհրդանիշների տապալման գործընթացը շարունակվում էր:
[2] ՀԱԱ, ֆ.207, g.62, գ.89, էջ 92:
[3] ՀԱԱ, ֆ.207, g.62, գ.17, էջ 123:

ընդունեց: Որոշման մեջ կասկած էր հայտնվում, որ «կենտրոնական իշխանությունները ևս մի փորձ են կատարել տոտալիտար մեթոդները ռեգիոնում փորձարկելու և այլ միութենական հանրապետություններ արտահանելու համար»[1]:

1990 թ. հոկտեմբերի 17-ի ԳԽ որոշմամբ Հայաստանում կասեցվեց «Ընդհանուր զինապարտության մասին ԽՍՀՄ-ի 1967 թ. հոկտեմբերի 12-ի օրենքի գործողությունը[2]: Որոշվեց ՀՀ քաղաքացիների զորակոչը կազմակերպել ՀՀ տարածքում: ՀՀ տարածքից դուրս կարող էին մեկնել միայն այդպիսի ցանկություն ունեցող երիտասարդները:

Բարդ վիճակ էր ստեղծվել նաև երկրի ներսում, օգտվելով խորհրդային իշխանության թուլացումից և նոր իշխանությունների անփորձությունից ակտիվացել էին քրեական տարրերը: ՀՀ ԳԽ նախագահության հրամանագրի 1990 թ. հոկտեմբերի 18-ի որոշմամբ թույլատրվեց զենք կրել ՀՀ ԳԽ նախագահության անդամներին, ՀՀ ԳԽ պաշտպանության և ներքին գործերի հարցերի հանձնաժողովի անդամներին[3]:

Սկսվեց պետական բառապաշարի հայացման գործընթացը: 1990 թ. նոյեմբերի 5-ին ԳԽ որոշմամբ ՀՀ սահմանադրության և մյուս օրենսդրական ակտերի հայերեն տեքստերում «մինիստր», «մինիստրություն», «Մինիստրների խորհուրդ» բառերն ու բառակապակցությունները փոխարինվեցին «նախախար», «նախախարություն», «Նախարարների խորհուրդ» բառերով ու բառակապակցություններով[4]:

Թեպետ օրենսդիր իշխանության էր եկել Հայոց համազգային շարժումը, սակայն կոմունիստները որոշ տեղերում դեռ պահում էին իր ազդեցությունը և դա մտահոգում էր նոր իշխանություններին: 1990թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԳԽ որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին», դադարեցվեց այդ մարմիններում կուսակցական և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը[5]:

Պետականաշինության համար կարևոր էր նոր քաղաքական համակարգի ձևավորումը, որի կարևորագույն ինստիտուտներից էին քաղաքական կուսակցությունները: 1990 թ. դեկտեմբերի 12-ին քննարկվեց «Կուսակցությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը[6]: Դրանով օրինականացվեց բազմակուսակցական համակարգը:

Գերագույն խորհուրդը կարևորեց մարդու հիմնարար իրավունքներին ուղղված օրինագծերի ընդունումը: 1990թ. նոյեմբերի 26-ին և 27-ին քննարկվեց և ընդունվեց ամնիստիայի մասին օրենքը, 27-ին՝ ՀՀ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագիծը, որը ներկայացրեց մարդու իրավունքների և ազգությունների հանձնաժողովի նախագահ Ռ.Պապյանը:

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.79, էջ 3:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.18, էջ 109:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.1, էջ 42:
[4] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 78:
[5] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 79:
[6] ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ.20, էջ 128:

Վերջինիս քննարկման ժամանակ ներկա էին Վեհափառ Հայրապետը և Էջմիածնի հոգևոր խորհրդի անդամները: Վեհափառ Հայրապետը գործուն մասնակցություն էր ունեցել նախագծի մշակմանը: Վեհափառը ԳԽ-ում իր ելույթով տարաշրջեց Հայոց պատմության խորքերը, արժևորելով եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում: Վեհափառը հետաքրքիր դրվագ պատմեց խորհրդային շրջանից: «Սրանից 14 տարի առաջ էր, երբ անսպասելի կերպով ինչ-որ որոշ հանգամանքների հետևանքով ստացա մի նամակ ռուսաց պատրիարքի ստորագրությամբ, որ եղբայրական սիրալիր մի գրություն էր, որով սակայն հրավեր կկարդացվեր մեր եկեղեցուն, որպեսզի միանանք, միաձուլվենք ռուս Պրովոսլավ եկեղեցու հետ: Ինձ համար տառապալից օրեր եղան պատասխան խմբագրելու համար, ի պատասխան, որ լիներ նույնպես եղբայրական և սիրալիր, բայց նաև խորքում մերժել այդ առաջադրանքը: Այդպես ալ եղավ: Սակայն այդ օրերին էլ ինձ մոտ այցելության էր եկած մեր պետական ներկայացուցիչը այն ժամանակվա եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը…Ցույց տվեցի իրեն այդ նամակը: Կարդաց, մի քիչ մտածեց, ես հարցրեցի՝ ի՞նչ է մտածում արդյոք մեր կառավարությունը այս առիթով, նա պատասխանեց բառացի այսպես. Վեհափառ, ես աստվածաբանական, դավանաբանական հարցերից չեմ հասկանում, բայց մի բան գիտեմ, որ ամեն ինչով խոնարհված ենք Մոսկվայի առաջ, գոնե մեր եկեղեցիով մեր գլուխը բարձր և ազատ պահենք»[1]: Վեհափառը ողջունեց խղճի ազատության գաղափարը, նշելով, որ կան եղբայրական եկեղեցիներ՝ կաթոլիկն ու ավետարանչականը: Սակայն զգուշացրեց «մեր հոգուն անհարազատ, դրսից մուծված աղանդներից, որոնք …առողջ դեր չեն կատարում մեր ժողովրդի մարմնի մեջ, որոնք… օտարներից քաջալերված և բոլորովին առնչություն չունեն ո՛չ մեր ազգային պատմության հետ, ո՛չ մեր ազգային մշակույթի հետ, ո՛չ մեր ազատագրական շարժման հետ, ո՛չ իսկ մեր, ձեր հռչակած Հռչակագրի ոգու հետ»[2]:

1990 թ. նոյեմբերի 30-ին ԳԽ հրավիրված վարչապետ Վ.Մանուկյանը ներկայացրեց երկրում տիրող իրավիճակը և խնդրեց մեկ տարով արտակարգ լիազորություններ տալ կառավարությանը[3]: Քննարկման դրեցին հետևյալ առաջարկները՝

«Ժամանակավորապես մեկ տարի ժամկետով իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահին՝ նշանակելու և պարտականություններից ազատելու Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի անդամներին:

Մինչև ժողովրդական պատգամավորների քաղաքային ու շրջանային խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների կազմավորումը…իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին՝ նշանակելու կենտրոնական իշխանությունների լիազոր ներկայացուցիչներ քաղաքներում և շրջաններում, նրանց տալով գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներ:

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը ժամանակավորապես նշանակել պաշտոններում և ազատել պաշտոններից ժողովրդական

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.92, էջ 5:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.92, էջ 8:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.20, էջ 69:

պատգամավորների տեղական խորհուրդների գործկոմների ներքին գործերի բաժինների պետերին»[1]:

ՀՀ Գերագույն խորհրդի 1990թ. նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանը և նրա նախագահին հատուկ լիազորություններ տալու մասին» որոշմամբ հավանություն տրվեց առաջին և վերջին կետերին: Որոշ ժամանակով իշխանության օրենսդիր և գործադիր թևերի միջև հակասությունը վերացավ:

ՀՀ ԳԽ-ն 1990թ. նոյեմբերի 5-ին, «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան, որոշվեց ՀՀ նոր սահմանադրության մշակման համար ստեղծել Սահմանադրական հանձնաժողով: Դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով որոշվեց մինչև ՀՀ սահմանադրության ընդունումը դադարեցնել գործող սահմանադրության այն դրույթները, որոնք հակասում են Անկախության հռչակագրի հիման վրա ԳԽ ընդունած օրենքին[2]:

1991 թ. մայիսի 23-ի նիստին քննարկվեց ՀՀ նախագահի պաշտոն ստեղծելու հարցը: Զեկուցումով հանդես եկավ, Վ.Մանուկյանը, որ տեղյակ պահեց, որ 1991 թ. մայիսին Հայաստան են եկել աշխարհի խոշորագույն հայ 250 բիզնեսմեններ: Մայիսի 25-ին մեծ միջոցառում պետք է լիներ, որտեղ կքննարկվեին համազգային հարցեր, այնպիսի կառույցների ստեղման հարցը, որ «աշխարհով սփռված մեր ազգը կարողանա հանդես գալ որպես մի ամբողջություն իր կառույցների մեջ»[3]: Վ.Մանուկյանը հնչեցրեց այն միտքը, որ հանրապետության կառուցվածքը չի համապատասխանում երկրի համար առկա մարտահրավերներին, որ «խճճված հարաբերություններ են» Գերագույն խորհրդի և Նախարարների խորհրդի միջև, մինչդեռ երկիրը օպերատիվ կառավարման կարիք ունի: Խոսեց կառավարության կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության մասին, նոր նախարարությունների մասին: ՀՀ նախագահի պաշտոն ստեղծելու հարցը կապվում էր նաև հայ-ադրբեջանական բախումների և ճգնաժամային իրավիճակներում արագ կողմնորոշման անհրաժեշտության հետ: 1991 թ. օգոստոսի 1-ին Գերագույն խորհուրդը ընդունեց ՀՀ նախագահի մասին օրենքը: Օրինագծի ընդունման ժամանակ արդեն հնչում էին կարծիքներ, որ դա բերելու է Գերագույն խորհրդի լիզորությունների մի մասի զիջմանը, սակայն դրական կողմ էր դիտվում, որ դա կբերի օպերատիվ կառավարման հնարավորությունների ստեղծմանը: Սակայն ՀՀ նախագահի պաշտոնի հիմնումից հետո պատգամավորների ընդդիմադիր թևի մոտ սկսվեց կարծիք ձևավորվել, որ երկրի համար վճռական պահին Գերագույն խորհուրդը դուրս է մնում քաղաքականությունից: Հետագայում ընդդիմադիր պատգամավորները ցավով էին նշում, որ ՀՀ նախագահի պաշտոնի ստեղծումից հետո Գերագույն խորհուրդն էականորեն տարբերվում է մինչ այդ եղածից: Գերագույն խորհրդի նախագահը այլևս հանրապետության բարձրագույն պաշտոնը չէր:

1991 թ. մարտի 1-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց անկախության հանրաքվե անցկացնել 1991 թ. սեպտեմբերի 21-ին : ՀՀ նախագահի ինստիտուտ հիմնելուց հետո ՀՀ ԳԽ կանոնադրության մեջ ավելացվեց կարգապահության գլուխը: ՀՀ կանոնադրությունից հանվեց այն

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.20, էջ 69:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ 20, էջ 144:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.110, էջ 16:

դրույթը, որ Գերագույն խորհուրդն իշխանության բարձրագույն մարմին է: Հասունացավ Գերագույն խորհրդի արմատական բարեփոխման հարցը:

Լևոն Տեր -Պետրոսյանի նախագահ ընտրվելուց և կառավարության նոր կազմը ձևավորելուց հետո սրվեցին հակասությունները նաև կառավարության հետ: Կառավարությունը չէր ընդունում Գերագույն խորհրդի առաջարկները, իսկ խորհրդարանը չէր հաստատում կառավարությունում մշակված երկրի զարգացման ծրագիրը, քանի որ գտնում էր, որ դա պետք է լինի հակաճգնաժամային ծրագիր: Բացի սուբյեկտիվ պատճառներից կային նաև օբյեկտիվ պատճառներ: 1992 թ. ապրիլի 21-ի ելույթում ՀՅԴ պատգամավորական խմբի անդամ Ռ.Հակոբյանը հետևյալ կերպ ձևակերպեց այդ հակասության բնույթը. ՝Պետք է ֆունկցիաները տարանջատենք, այսինք՝ մեր օրենսդիր մարմնի ֆունկցիաները գործադիր մարմնից և երկրորդը, եթե իսկապես կառավարությունը չի ընդունում մեր առաջարկություններից ոչ մեկը, այդ դեպքում ի՞նչ իրավունքով ենք մենք նախագիծ ներկայացնում…՚[1], եթե ի սկզբանե պարզ է, որ կառավարությունը մերժելու է :

Պատգամավոր Ա. Նավասարդյանը (ՀՀԿ նախագահ) ավելի խորքային բնույթ էր տեսնում այդ հակասություններում, նշելով՝ ՝Ինձ թվում է, մենք փորձում ենք անցնել անանցելի ճանապարհով, մեր խորհրդարանի ձևավորման սկզբից եթե խորհրդարանը չունի կոնցեպցիա թե ինչպիսի պետություն է ուզում կառուցել, չունի վերաբերմունք Արցախի նկատմամբ, չունի վերաբերմունք Հայաստանի պաշտպանության նկատմամբ, չկա որևէ դոկտրինա դեռևս[2]… Պետք է խորհդարանը այս հիմնական հարցերին պատասխան տա և համաձայնությունը պետք է կայանա նրանում, որ ինչպես Արցախի, այնպես էլ պաշտպանության հարցում մենք պետք է գանք համաձայնության, որից հետո մենք պետք է կառուցենք դետալներ և դնենք իրենց տեղերը, այս ընդհանուր պատկերի վրա: Ընդհանուր պատկեր ստեղծված չի և մենք փորձում ենք կրկին դա հետաձգել և ասել Լ.Տեր -Պետրոսյան կամ պարոն Բագրատյան, կամ պարոն վարչապետ, եկեք այստեղ դուք ներկայացրեք, հետո մենք կմտածենք ընդունենք դա թե չընդունենք: Մենք պարտավոր ենք ինքներս մշակել մեր պետության կոնցեպցիան և պրեզիդենտը պետք է գա կամ դա մերժի կամ էլ ընդունի, որ մենք ճիշտ ենք, հիմա մենք դա չենք արել և մենք կրկին ասում ենք հունիսին կամ հուլիսին թող գա ինչ-որ պատրաստ բան ներկայացնի: Իսկ մինչ այդ կառավարությունը ասում է՝ ես ինչ ուզենամ այն էլ կանեմ՚[3]: Այսինքն իշխանության թևերի միջև հակասություններն առաջանում էին նաև հայեցակարգային բացերից:

Եզրակացություններ: ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդը իրականացնում էր օրենսդրական, ներկայացուցչական, վերահսկողական, գաղափարախոսական կարևոր գործառույթներ և հանդիսանում այն ֆորմալ հարթակը, որտեղ նախագծվում էր անկախացող հանրապետության հետագա ուղին: Առաջին տարիներին, քանի դեռ չէր ընդունվել ՀՀ Սահմանադրությունը, խորհրդարանը փոփոխությունների հիմնական առաջնորդողն էր, միևնույն ժամանակ հասարակական-քաղաքական կյանքի փոփոխությունները ազդում էին Գերագույն խորհրդի գործունեության վրա: ՀԽՍՀ ԳԽ-ն ձևավորեցին 2 հիմնական կուսակցությունները՝

[1] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.197, էջ 19:
[2] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.197, էջ 21:
[3] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.197, էջ 22:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և Հայոց համազգային շարժում կուսակցությունը, սակայն ՀՀ Գերագույն խորհուրդը դարձավ բազմակուսակցական։ Փոխակերպումները, որոնք տեղի ունեցան Գերագույն խորհրդի հետ հայ հասարակության պետության տեսակի և բովանդակության փնտրտուքի արդյունք էին։

Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվի նյութեր՝ Ֆոնդ 207, ցուցակ 62, գործեր 1, 4, 17, 18, 19, 20, 43, 45, 47, 51, 52, 54, 55, 65, 79, 89, 92, 110

2. Վ.Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում //«Վ.Ի.Վ. ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ», Երևան, 2002թ.

3. Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի: Երևան, 2006։